Քաղաքացիական գործ ԵԴ 2/8041/02/23

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12-ը հունիսի 2023թ. ք.Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը /դատավոր Ա. Մկրտչյան/, ուսումնասիրելով «Խաչ պար» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/20 ընթացակարգի մրցույթի գնահատող հանձնաժողովին գնանշման հարցման ընթացակարգը հրավերի 3,4,5և 6չ ափաբաժինների մասերով չկայացած հայտարարելու մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին

ՊԱՐԶԵՑ

Հայցադիմումը ներկայացվել և դատավոր Ա.Մկրտչյանին մակագրվել է 07.06.2023թ., 08.06.20223թ. հանձնվել դատավորի աշխատակազմին:

Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը բացակայում են,ուստի հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետկապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Նույն օրենսգրքի 234.6 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն օրենսգրքի 234.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին ծանուցվում են էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ծանուցագրերը և այլ փաստաթղթեր սույն օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով:

Հայցվորի կողմից ներկայացվել է միջնորդություն՝ գործը դատական նիստում քննելու մասին, որով հայցվորը նշել է, որ հայցադիմումով վիճարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան կազմված չլինելու փաստերը, որոնք հանգեցնում են նույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի խախտմանը, և որոնց բովանդակային ներկայացնելը գրավոր ընթացակարգով ամբողջական չի կարողանալ,ուստի անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Նույն օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Վերոգրյալից հետևում է,որ գործը դատական նիստում քննելու համար որոշում կայացնելը Դատարանի հայեցողական լիազորությունն է, որը սակայն ինքնանպատակ չէ. Դատարանը նման որոշման կարող է հանգել սեփական նախաձեռնությամբ՝ գործի ուսումնասիրության արդյունքում, ինչպես նաև գործին մասնակցող անձի միջնորդությամբ: Միջնորդությունը պետք է պարունակի այնպիսի հիմնավորող փաստարկներ,որոնք Դատարանի հիմք կտան գալու գործը դատական նիստում քննելու եզրահանգման:

Դատարանը գործը դատական նիստում քննելու մասին հայցվորի միջնորդության քննարկման արդյունքում գտնում է, որ դրանում նշված հիմնավորումները բավարար չեն գործը դատական նիստում քննելու անհրաժեշտության մասին եզրահանգում կատարելու մասին:

Դատարանը նման եզրահանգման գալիս է՝ հաշվի առնելով, որ հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումը և կից փաստաթղթերը բավարար են գործի լրիվ և բազմակողմանի քննությունն իրականացնելու համար, իսկ գրավոր ընթացակարգով փաստարկները բովանդակային ներկայացնելու ոչ ամբողջական լինելու մասին հայցվորի դիտարկումը համոզիչ չէ և չի

պարունակում այնպիսի հիմքեր, որոնց հիման վրա Դատարանը կկարողանար հանգել համապատասխան եզրակացության:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 234.5-րդ, 234.6-րդ, 234.8-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

Հայցադիմումն ընդունել վարույթ, եզրափակիչ դատական ակտի հրապարկման օր սահմանել 2023թ.հուլիսի 25-ը:

Կողմերի ծանուցումն իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկելու եղանակով:

Պատասխանող «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից պահանջել որոշումն ստանալու օրվանից հնգօրյա ժամկետում Դատարանին ներկայացնել ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/20 ծածկագրով գնման գործընթացի՝ իր տիրապետության ներքո բոլոր ապացույցները:

Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

Digitally signed by MKRTCHYAN ARAM 1712720074
Date: 2023.06.12 11:18:28 AMT